ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
МАРЗ АРМАВИР
ОБШИНА БАМБАКАШАТ

« 03 » Հոկտեմբերի 2011թ. Թիվ 146

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊՐՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն մարզպետ.

Բամբակաշատի գյուղապետարանը Ձեզ է ներկայացնում, որ 2011 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի կարգադրությունները և համայնքի ղեկավարի որոշումները:

Համայնքի ղեկավարի որոշում՝ 3 հատ:

Չկա համայնքի ղեկավարի կարգադրություն:

Առդիր 3 թերթ:

ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 9268-11
«04» 10 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 09

« 01 »Սեպտեմբերի 2011թ. գ.Բամբակաշատ

ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 777-րդ - 781րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի երեխաներին Սարդարապատ գյուղական համայնքի մանկապարտեզ տեղափոխումն սպասարկելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համայնքի բնակիչ Արամ Վանուշի Հարությունյանի հետ 2011 թվականի սեպտեմբերի 1-ից կնքել վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր՝ համաձայն հավելվածի:
2. Պայմանագրի գին սահմանել՝ ամսական 130.0 հազար ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2011 թ. սեպտեմբերի 01,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

« 06 » Սեպտեմբերի 2011թ. գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով « Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատ գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել եռամսյակային փոփոխություն՝

01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4241 հոդվածում չորրորդ եռամսյակում նախատեսված 200.0 հազ.դրամից 48.0 հազար դրամը տեղափոխել երրորդ եռամսյակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2011 թ. սեպտեմբերի 06,
գ.Բամբակաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԲԱՄԲԱԿԱՇԱՏ ՀԱՄԱՅՆՔ

РЕСПУБЛИКА АРМЕНИА
МАРЗ АРМАВИР
ОБШИНА БАМБАКАШАТ

« 22 » Սեպտեմբերի 2011թ

ՈՐՈՇՈՒՄ N 11

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 118 հոդվածի 6 կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բամբակաշատի գյուղական համայնքի վարչական տարածքում գտնվող մսուր-մանկապարտեզի շենքի նկատմամբ 0.6056 հա հողատարածքի հողահատկացման հիմքը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

2011 թ. սեպտեմբեր,
գ.Բամբակաշատ